ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

# ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

Նալբանդյան համայնք, 4պ. 2շ. հեռ. 093008908

«15 » դեկտեմբերի 2019 թվական N 30

## ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասով.**

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 15 -ի N 7 հերթական նիստի օրակարգը ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1. Ա. Ասլանյան | | -------- | --------- |
| 2. Թ. Դավթյան | | -------- | --------- |
| 3. Ա. Թովմասյան | -------- | -------- | --------- |
| 4. Յ. Ղազարյան | -------- | -------- | --------- |
| 5. Հ. Մանուկյան | -------- | --------- | ---------- |
| 6. Մ. Պետրոսյան | --------- | --------- | ---------- |

Համայնքի ղեկավար՝ Գ.Մկրտչյան

Հավելված՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի

մարզի Նալբանդյան համայնքի

ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 15 -ի

N 7 հերթական նիստի N 30 որոշման

1. Օրակարգը հաստատելու մասին:

2. Համայնքի ավագանու 2020 թվականի նիստերի ժամանակացույցը հաստատելու մասին:

3. Նալբանդյան համայնքի 2020 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին:

4.Անապահով ընտանիքներին օգնություն տրամադրելու մասին:

5. Անապահով ընտանիքների ավտոմեքենաների գույքահարկը զիջելու մասին:

Աշխատակազմի քարտուղար՝ Ն. Պողոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

---

Նալբանդյան համայնք, 4պ. 2շ. հեռ. 093008908

# ՈՐՈՇՈՒՄ

«15 » դեկտեմբերի 2019 թվականի N 31

## ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդված 2-րդ մասով,

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել համայնքի ավագանու 2020 թվականի հերթական նիստերի ժամանակացույցը համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1. Ա. Ասլանյան | -------- | -------- | --------- |
| 2. Թ. Դավթյան | -------- | -------- | --------- |
| 3. Ա. Թովմասյան | -------- | -------- | --------- |
| 4. Յ. Ղազարյան | -------- | -------- | --------- |
| 5. Հ. Մանուկյան | --------- | --------- | ---------- |
| 6. Մ. Պետրոսյան | --------- | --------- | ---------- |

Համայնքի ղեկավար՝ Գ.Մկրտչյան

Հավելված՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Նալբանդյան համայնքի ավագանու 2019թ.

դեկտեմբերի 15-ի
N 7 հերթական նիստի N 31 որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ

| Հ/հ | Նիստի հրավիրման ամիսը | Նիստի անցկացման օրը | Նիստի անցկացման ժամը |
|---|---|---|---|
| 1 | Փետրվար | 15 | 11.00 |
| 2 | Ապրիլ | 15 | 11.00 |
| 3 | Հունիս | 15 | 11.00 |
| 4 | Օգոստոս | 15 | 11.00 |
| 5 | Հոկտեմբեր | 15 | 11.00 |
| 6 | Դեկտեմբեր | 15 | 11.00 |

Աշխատակազմի քարտուղար՝ Ն. Պողոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

---

# ՈՐՈՇՈՒՄ

«15 » դեկտեմբերի 2019 թվականի N 32

## ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տիմ,, ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով և ,, Տեղական տուրքերի և վճարների մասին,, ՀՀ օրենքի 12-րդ և 14-րդ հոդվածներով, ,,Աղբահանության և սանիտարական մաքրման մասին,, ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով և ,,Նորմատիվ իրավական ակտերի մասին,, ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասով,

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սահմանել ՀՀ Արմավիրի մարզի Նալբանդյան համայնքի վարչական տարածքում 2020 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափեր՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1. Ա. Ասլանյան | -------- | -------- | --------- |
| 2. Թ. Դավթյան | -------- | -------- | --------- |
| 3. Ա. Թովմասյան | -------- | -------- | --------- |
| 4. Յ. Ղազարյան | -------- | -------- | --------- |
| 5. Հ. Մանուկյան | --------- | --------- | ---------- |
| 6. Մ. Պետրոսյան | --------- | --------- | ---------- |

Համայնքի ղեկավար՝ Գ.Մկրտչյան

Հավելված`
Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Նալբանդյան համայնքի
ավագանու 2019 թվականի դեկտեմբերի
15-ի N 7 հերթական նիստի N 32 որոշման

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է`

հիմնական օբյեկտների համար`

ա/ մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի , այդ թվում այգեգործական / ամառանոցային/ տների , ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 5000 /հինգ հազար/ դրամ .

բ/ սույն կետի «ա» ենթակետում չնախատեսված օբյեկտների համար

բա/ 201-ից մինչև 500քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 10000 /տաս հազար/ դրամ.

բբ/ 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 10000 /տաս հազար/ դրամ .

բգ/ 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 15000 /տասնհինգ հազար/ դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար .

գ/ մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 1500 / մեկ հազար հինգ հարյուր/ դրամ.

դ/ 20 և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ.

2.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների , քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, վերականգնման, արդիականացման աշխատանքների /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի / համար , եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով `

ա/ չի նախատեսվում կցակառույցների , վերնակառույցների , շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում ` ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր

մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն մեկ հազար-հինգ հարյուր դրամ.

բ/ բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն

կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր

շինության համար «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի

Հանրապետության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը օբյեկտի ընդհանուր մակերեսի ավեացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

գ/ նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում `ստորգետնյա/ շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն ապա, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինություն որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000/ հինգ հազար / դրամ:

4. Համայնքի տարածքում`

ա/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար` 350/ երեք հարյուր հիսուն/ դրամ:

բ/ հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանվում է 150.000 /մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ:

գ/ Խանութներում տեխնիկական հեղուկի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը համայնքի տարածքում ընթացիկ տարվա համար սահմանվում է 30.000 /երեսուն հազար/ դրամ:

1. Ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար` հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` յուրաքանչյուր եռամսյակի համար 5000 /հինգ հազար/ դրամ:
2. Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար` հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպելու դեպքում` յուրաքանչյուր եռամսյակի համար` 5000/հինգ հազար/ դրամ:

5. Համայնքի տարածքում` առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները, /սաունաները / խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար` տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է.

ա/ առևտրի օբյեկտների համար` 25.000 /քսանհինգ հազար / դրամ.

բ/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար` 50.000 /հիսուն հազար / դրամ.

գ/ բաղնիքների և սաունաների համար` 200.000 /երկու հարյուր հազար/ դրամ.

դ/ խաղատների կազմակերպման համար` 500.000 / հինգ հարյուր հազար/ դրամ.

ե/ շահումով խաղերի կազմակերպման համար` 250.000 /երկու հարյուր հիսուն հազար/ դրամ.

զ/ վիճակախաղերի կազմակերպման համար`100.000 /մեկ հարյուր հազար / դրամ:

6. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է`

ա/ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար` 1000 / մեկ հազար/ դրամ:

բ/ թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավել ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար` 2500 /երկու հազար հինգ հարյուր / դրամ.

գ/ այլ արտաքին գովազդի համար` 500 /հինգ հարյուր / դրամ.

դ/ դատարկ գովազդային վահանակների համար` 700 / յոթ հարյուր/ դրամ:

7. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 5000 /հինգ հազար/ դրամ:

8. Համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար` սահմանվում է 5000 /հինգ հազար / դրամ:

## ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ`

1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար ` տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 5000 / հինգ հազար / դրամ:

2. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու , հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար ` տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 3000 / երեք հազար/ դրամ :

3. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել 10.000 /տաս հազար/ դրամ:

4. ,,Մանկապարտեզ" /ՀՈԱԿ/ համար ծնողական վճար սահմանել յուրաքանչյուր երեխայի համար ամիսը 3000 / երեք հազար / դրամ:

5.,, Երաժշտական դպրոց " /ՀՈԱԿ / ամսական վճար սահմանել` դաշնամուրի , վոկալի համար` 2500 /երկու հազար հինգ հարյուր / դրամ, ժող. գործիքների խմբերի մասնակիցների համար` 1500 /մեկ հազար հինգ հարյուր/ դրամ, իսկ ծնողազուրկ և սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար` անվճար:

6. Գոբելենի և դիզայներական խմբերի համար ամսական վճար սահմանել 1500-ական դրամ: Անապահով ընտանիքների երեխաների ուսուցումը կազմակերպել անվճար:

7. Խմելաջրի մատակարարման համար դրույքաչափը` յուրաքանչյուր տան համար սահմանել ամսական 1000 /մեկ հազար/ դրամ, սահմանել արտոնություն` համայնքում բնակվող սոցիալապես անապահով ընտանիքների համար սահմանված վճարի 50%-ի չափով:

8. Համայնքի վարչական տարածքում գործող կազմակերպությունների աղբահանությունն իրականացնելու համար տեղական տուրքի դրույքաչափ սահմանել 1 քմ- 10 դրամ:

9. Համայնքի վարչական տարածքում գործող խանութների, դեղատների, հանդիսությունների սրահների, ավտոմեքենաների լվացման կետերի համար սահմանել տեղական տուրքեր և վարձավճարներ, հետևյալ կարգով.

ա/ Խանութների համար – 24.000 դրամ

բ/ Դեղատների համար - 36000 դրամ

գ/ Հանդիսությունների սրահների համար` – 150.000 դրամ

դ/ Ավտոմեքենաների լվացման կետերի համար –12.000 դրամ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ` Ն. ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

Նալբանդյան համայնք, 4պ. 2շ. հեռ. 093008908

«15 » դեկտեմբերի 2019 թվական N 33

# ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԸ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Գույքահարկի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 15 հոդվածով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը,

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Զիջել համայնքի սոցիալապես անապահով բնակիչների ավտոմեքենաների գույքահարկը համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1. Ա. Ավանյան | -------- | -------- | --------- |
| 2. Թ. Դավթյան | | -------- | --------- |
| 3. Ա. Թովմասյան | -------- | -------- | --------- |
| 4. Ղ. Ղազարյան | -------- | -------- | --------- |
| 5. Հ. Մանուկյան | -------- | -------- | --------- |
| 6. Մ. Պետրոսյան | -------- | --------- | --------- |

Համայնքի ղեկավար՝ Գ. Մկրտչյան

*04403251*

Հավելված՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի

մարզի Նալբանդյան համայնքի

ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 15 -ի

N 7 հերթական նիստի N 33 որոշման

ՑԱՆԿ

Ավտոմեքենաների գույքահարկը զիջելու մասին

1. Գինոսյան Բաբկեն – Գազ 24-10- 10.000 դրամ
2. Սիմոնյան Շահեն – Վազ 21063 – 6900 դրամ
3. Գևորգյան Գևորգ – Մոսկվիչ 412 – 7500 դրամ
4. Մարտիրոսյան Արտուշ – Վազ 21063 – 15600 դրամ
5. Սահակյան Արտակ – Գազ 33021 – 5000 դրամ
6. Սուքիասյան Արթուր – Վազ 21063 – 6900 դրամ
7. Հավաթյան Հովհաննես – Վազ 2101- 6400 դրամ
8. Մկրտչյան Երջանիկ – Գազ 2410 – 10000 դրամ
9. Խաչատրյան Գառնիկ – Գազ 2410- 10000 դրամ
10. Գասպարյան Հովհաննես – Վազ 2103 – 15100 դրամ
11. Սարգսյան Լյովա – Իժ 2125100- 7528 դրամ
12. Զաքարյան Արտյոմ – Գազ 3110 – 19612 դրամ
13. Հովոբյան Հայրապետ – Գազ 24 -10068 դրամ
14. Մարտիրոսյան Քաջիկ – Գազ 3110 – 10068 դրամ
15. Հակոբյան Արմեն – Գազ 24 – 4758 դրամ
16. Հազրոյան Վաչագան – Վազ 21074 – 3118 դրամ
17. Գաբրիելյան Արմեն – Վազ 2121 – 8090 դրամ
18. Գասպարյան Հերմինե – Վազ 21074-7399 դրամ

Աշխատակազմի քարտուղար՝ Ն. Պողոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

Նալբանդյան համայնք, 4պ. 2շ. հեռ. 093008908

«15 » դեկտեմբերի 2019 թվական N 34

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը,

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրել դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1. Ա. Ասլանյան | | -------- | --------- |
| 2. Թ. Դավթյան | | -------- | --------- |
| 3. Ա. Թովմասյան | -------- | -------- | --------- |
| 4. Յ. Ղազարյան | -------- | -------- | --------- |
| 5. Հ. Մանուկյան | -------- | -------- | --------- |
| 6. Մ. Պետրոսյան | -------- | --------- | ---------- |

Համայնքի ղեկավար՝ Գ.Սկրտչյան

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Նալբանդյան համայնքի
ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 15-ի
N 7 հերթական նիստի N 34 որոշման

ՑԱՆԿ

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ

ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ

1. Երվանդյան Անահիտ -50.000 /հիսուն հազար/ դրամ
2. Սահակյան Սահակ - 50.000 /հիսուն հազար/ դրամ
3. Իսայան Սամանդ - 50.000 /հիսուն հազար/ դրամ
4. Իսայան Խաչե - 50.000 /հիսուն հազար/ դրամ
5. Հովհաննիսյան Էմմա -50.000 /հիսուն հազար/ դրամ
6. Մարտիրոսյան Յուրիկ -50.000 /հիսուն հազար/ դրամ
7. Գինոսյան Համլետ - 50.000 /հիսուն հազար/ դրամ
8. Խաչատրյան Սուրեն - 50.000 /հիսուն հազար/ դրամ
9. Մնացականյան Հովհաննես - 50.000 /հիսուն հազար/ դրամ
10. Սիմոնյան Արման - 50.000 /հիսուն հազար/ դրամ
11. Սեդրակյան Ռոբերտ - 50.000 /հիսուն հազար/ դրամ
12. Կիրակոսյան Արմեն - 50.000 /հիսուն հազար/ դրամ

---

Ընդամենը 600.000 վեց հարյուր հազար/ դրամ

Աշխատակազմի քարտուղար՝ Ն. Պողոսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Էլ.փոստ nalbandyan.armavir@mta.gov.am

20 դեկտեմբերի 2019 թիվ 223

4 պողոտա 2 շենք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝
ՊԱՐՈՆ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ,

Ձեզ է ներկայացվում ՀՀ Արմավիրի մարզի Նալբանդյան համայնքի ավագանու 2019թ. դեկտեմբերի 15-ին կայացած թիվ 7 հերթական նիստի որոշումները:

**Նալբանդյան համայնքի ղեկավար՝** **Գ. Մկրտչյան**

*Կատ.՝ Ն. Պողոսյան հեռ. 093847584*

Հ. Ավետիսյանը,